ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

03.07.2020
Ք. Իջևան

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում: */Զեկուցող՝ Կ. Պողոսյան/*

2. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում: */Զեկուցող՝ Կ. Պողոսյան/*

3. Կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգը քննարկելու և հետազոտական բաղադրիչ ներդնելու հարցի վերաբերյալ */Զեկուցող՝ ամբիոնի վարիչներ/*

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետի չորս կրթական ծրագրերով իրականացվել են ավարտական աշխատանքների պաշտպանություններ: Նա նշեց, որ Հայաստանում տիրող արտակարգ իրավիճակի պայմաններում համալսարանի, ֆակուլտետի և ամբիոնների ղեկավարները պատշաճ ձևով և բարձր մակարդակով կազմակերպել էին ավարտական աշխատանքների պաշտպանությունները: Բոլոր ուսանողները հնարավորություն ունեցան տեսահեռահաղորդակցման միջոցով ներկայացնել իրենց աշխատանքները և տեսասահիկային հանդեսները: Ուսանողներն իրենց ավարտական աշխատանքներում պահպանել էին նախատեսված չափորոշիչները: Ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակ առկա էին ղեկավարների և գրախոսների կարծիքները:

Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություն է իրականացրել «Պատմություն» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման համակարգերում: Առկա ուսուցմամբ ավարտական աշխատանք է պաշտպանել 11 ուսանող: Ուսանողներից 3-ը ստացել է

«գերազանց», 4-ը՝ «լավ», 4-ը՝ «բավարար» գնահատական: «Անբավարար» գնահատական չի գրանցվել: Հեռակա ուսուցման բաժնում 40 ուսանող պաշտպանել է ավարտական աշխատանք: «Գերազանց» գնահատական ստացել է 4 ուսանող, 11-ը՝ «լավ», 23-ը՝ «բավարար»: «Անբավարար» գնահատական է ստացել 1 ուսանող, 1 ուսանող չի ներկայացել:

Զեկուցողն ավելացրեց, որ քննական հանձնաժողովի նախագահ, Խ. Աբովյանի անվան ԵՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի փոխդեկան, պ.գ.թ., դոցենտ Հայկ Իշխանի Գրիգորյանը հիմնականում գոհ է մնացել ավարտական աշխատանքների գիտական մակարդակից, ուսանողների պատրաստվածությունից ու ցուցաբերած գիտելիքներից: Իր հաշվետվության մեջ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահն ուշադրություն է դարձրել այն փաստին, որ ավարտական աշխատանքների վերաբերյալ գրված կարծիքներն ու գրախոսությունները գրված են ըստ էության, վեր են հանում վրիպակներն ու թերությունները: Նա ամբիոնի աշխատակիցների ուշադրությունը հրավիրել է այն հանգամանքի վրա, որ հաջորդ տարիներին ավելի շատ աշխատանքներ լինեն հին շրջանից և միջնադարից:

Զեկուցողը ներկայացրեց, որ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի կողմից ուսումնական տարեսկզբին արդեն վերջնական հաստատվել էին ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները, նշանակվել էին ղեկավարներ: Սահմանվել էր գրաֆիկ՝ ավարտական աշխատանքների ղեկավարների և ուսանողների հանդիպման համար: Համավարակի ընթացքում ղեկավարների հետ աշխատանքները շարունակվել են Zoom հարթակում և էլեկտրոնային այլ միջոցներով: Զեկուցողը նշեց, որ քննական հանձնաժողովի նախագահ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի լեզուների ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Լավրենտի Միրզոյանը իր գոհունակությունն է հայտնել քննական գործընթացի արդյունքների վերաբերյալ՝ մասնավորապես ընդգծելով այն հանգամանքը, որ շրջանավարտների գիտելիքները խորն էին, որակական մակարդակը՝ բարձր: Ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 14 շրջանավարտներից 9-ը ստացել է «գերազանց», 5-ը՝ «լավ»: «Բավարար» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

Լավ տպավորություն է թողել ուսանողների բանավոր խոսքը, որ սահուն էր և արտահայտիչ: Շատ հետաքրքիր էր կազմակերպվել նաև հեռավար պաշտպանությունը՝ տեսասահիկների կիրառությամբ: Իհարկե, ավարտական որոշ աշխատանքներում նկատելի էին գրքայնություն, ինքնուրույնության պակաս և այլ մասնավոր թերություններ: Հանձնաժողովի նախագահը խորհուրդ տվեց հետագայում հանձնարարվող թեմաներում ուսումնասիրել նաև Տավուշի մարզի գրողներին, կարևորություն տալ տեղի խոսվածքների և բանահյուսական հարուստ նյութի հետազոտությանը:

«Անգլերեն լեզու և գրականություն» ամբիոնի կողմից մինչև ուսումնական տարվա սկիզբը կազմվել և հաստատվել են կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները: Սահմանվել է գրաֆիկ՝ ավարտական աշխատանքների ղեկավարների և ուսանողների հանդիպման համար: Սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ուսանողները հանդիպել են իրենց ղեկավարների հետ. իրականացվել է ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: Այստեղ ևս ղեկավարների հետ աշխատանքները շարունակվել են Zoom հարթակում և էլեկտրոնային այլ միջոցներով:

Զեկուցողը նշեց, որ ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություններն անցել են բարձր մակարդակով, որն ընդգծել է նաև քննական հանձնաժողովի նախագահ, Եվրոպական համալսարանի ‹‹Լեզվաբանություն›› ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Նելլի Հարությունյանը, ով իր գոհունակությունն է հայտնել ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ: Նա նշեց, որ աշխատանքները գրվել են անգլերենով, մեծ մասամբ ներկայացվել են լեզվաբանական արդի խնդիրներ, և փորձ է արվել նորովի և տարբեր տեսանկյուններից ներկայացնել դրանք: Հանձնաժողովի նախագահը բարձր է գնահատել ուսանողների պատրաստվածությունը: Նա նշել է, որ կային ինչպես փայլուն, այնպես էլ լավ պատասխաններ: Նա առանձնացրել է որոշ ուսանողների բավական վստահ և հանգամանալից պատասխանները, որոնք վկայել են ուսանողների հստակ և լավ գիտելիքների առկայության մասին: Քննությունը անցել է հանգիստ և խաղաղ մթնոլորտում: Բողոքարկման դեպքեր չեն արձանագրվել:

Նախագահը ցանկություն է հայտնել հետագայում ավելի ընդլայնված տեսնել բուհերի մեջև համագործակցությունը:

Ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 19 շրջանավարտներից 10-ը ստացել է «գերազանց», 9-ը՝ «լավ»: «Բավարար» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից կազմակերպված ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել է պատշաճ մակարդակով, քննական կարգի խախտման որևէ դեպք չի արձանագրվել: «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցած առկա ուսուցման համակարգի 38 շրջանավարտներից 7-ը ստացել է «գերազանց», 26-ը՝ «լավ», 5-ը՝ «բավարար» գնահատական: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

Զեկուցողը նաև ներկայացրեց «Հոգեբանություն» կրթական ծրագրի հեռակա ուսուցման բաժնի այս տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 34 շրջանավարտներից 9-ը ստացել է «գերազանց», 18-ը ստացել է «լավ», 7-ը՝ «բավարար» գնահատական: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

Զեկուցողը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունից հետո քննական հանձնաժողովի նախագահ, ‹‹Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան›› հիմնադրամի ‹‹Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ›› կենտրոնի գլխավոր մասնագետ, մ.գ.դ., պրոֆեսոր Սպարտակ Սողոյանը ներկայացրել է իր առաջարկությունները՝ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ, և հայտնել իր գոհունակությունը տարվող աշխատանքներից: Նա առաջարկել է հետագայում ավելի մեծ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքի հետազոտության մեթոդների ընտրությանը և դրանց համապատասխանությանը հետազոտվող առարկային:

Հիմնականում թեմաներն արդիական էին, սուր հնչեղություն ունեցող հարցեր էին: Ուսանողները հիմնավոր, համոզիչ կերպով ներկայացնում էին իրենց

հետազոտության թեմայի կարևորությունը ուսուցման և դաստիարակության տեսության և պրակտիկայի համար:

Աշխատանքները հիմնականում բավարարում են ավարտական աշխատանքի պատրաստմանը ներկայացված պահանջներին: Ուսանողները տիրապետում էին գիտամանկավարժական հետազոտությունների անցկացման մեթոդաբանությանը: Հավանաբար ստեղծված իրավիճակի պայմաններում ուսանողներն իրենց աշխատանքներում քիչ են օգտվել վերջին տարիներին հրատարակված գրքերից և ուսումնամեթոդական գրականությունից:

Պաշտպանությունների ընթացքում քննող հանձնաժողովը հայտնաբերեց ավարտական աշխատանքների թեմաներ, որոնք կամ տվյալ կրթական ծրագրին չէին համապատասխանում (օրինակ՝ հոգեբանական ուղղվածություն ունեին), կամ էլ նպատակահարմար չէին դասվարի մասնագիտությանը: Հանձնաժողովի նախագահն առաջարկեց այսուհետ ԵՊՀ ԻՄ-ում ստեղծել նեղ մասնագետների հանձնախումբ, որը համապատասխան ամբիոնի վարիչի հետ կքննարկի առաջարկված թեմաները և նշված մասնագիտությանը համահունչ լինելու դեպքում՝ դրանք կառաջարկի ընդգրկել ավարտական աշխատանքների թեմաների ցանկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

Զեկուցողները արձանագրեցին, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունը բոլոր մասնագիտություններից ունեցել է պատշաճ ակադեմիական մակարդակ և բավարար կազմակերպվածություն:

Ուսանողներն ավարտական աշխատանքների պաշտպանությանը ներկայացել են պատրաստ: Մեծամասնությունը անհրաժեշտ չափով ուսումնասիրել էր պահանջվող գրականությունը և օժանդակ նյութերը: Կային նաև թերի պատրաստված ուսանողներ: Վերջիններս հիմնականում ուսումնառության ընթացքում ունեցել են ակադեմիական ցածր առաջադիմություն: Առաջընթացը պայմանավորված է մի շարք կարևոր աշխատանքներով, որոնք տարիների ընթացքում կանոնավորապես

իրականացվում են ամբիոններում: Առաջին հերթին դրական դեր են ունեցել նախորդ ամիսներին կազմակերպված նախապաշտպանությունները: Ամբիոնների վարիչները գործող ժամանակացույցով իրականացրել են նախապաշտպանություններ /որոշ ամբիոններում՝ մի քանի անգամ/, որոնց ընթացքում շտկվել են նկատված սխալներն ու թերությունները: Որակի բարձրացմանն անշուշտ նպաստել են նաև ավարտական և կուրսային աշխատանքներ կատարելու վերաբերյալ մեթոդական ձեռնարկների առկայությունը ամբիոններում, ինչպես նաև գնահատման հստակ չափանիշերով առաջնորդվելը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց քննաշրջանի կազմակերպական աշխատանքների ընթացքը: Նա նշեց, որ Հայաստանում տիրող արտակարգ իրավիճակի պայմաններում ուսանողները Zoom հարթակով են մասնակցել քննություններին: Յուրաքանչյուր կուրսի համար ստեղծվել է օնլայն լսարան, առանձին հասցե, որով իրականացվել է քննությունը:

Նշվեց, որ գարնանային քննաշրջանի ընթացքը եղել է պատշաճ կազմակերպված, քննությունները տեսաձայնագրվել են և հսկվել են ֆակուլտետի ղեկավարության և Ուսումնամեթոդական վարչության կողմից:

Ընդգծվեց, որ տարեցտարի բարձրանում է ուսանողների պատրաստվածության մակարդակը ստուգարքներին և քննություններին: Նշված ժամանակահատվածում ֆակուլտետի առաջադիմությունը կազմել է 83.46%, որը գրեթե կրկնում է նախորդ տարվա ցուցանիշը:

2019-2020 ուստարվա ամառային քննաշրջանին մասնակցել է 227 ուսանող: Միայն գերազանց գնահատականներ են ստացել 43 ուսանող, գերազանց և լավ՝ 88, խառը գնահատականներ՝ 94, իսկ միայն բավարար՝ 2 ուսանող: 41 ուսանողներ չեն

կարողացել հանձնել քննությունները և իրենց ուժերը կփորձեն լուծարքային շրջանում: Զեկուցողը նշեց, որ մեկ անբավարար է ստացել 28 ուսանող, երկու անբավարար՝ 8, իսկ երեք և ավելի՝ 8 ուսանող: Դրանց մի զգալի մասը անբավարար պատրաստվածության պատճառով չի ներկայացել ստուգարքներին և քննություններին: Զեկուցողը ընդհանուր գծերով ներկայացրեց ակադեմիական պարտքերի պատկերը, որը, ըստ մասնագիտությունների, հետևյալն է.

- Պատմություն՝ 3
- Օտար լեզու և գրակ.՝ 15
- Անգլերեն լեզու և գրականություն՝ 3
- Տարրական մանկ. և մեթոդիկա՝ 20

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյան, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Վ. Ավագյանը ներկայացրեց, որ ղեկավարվելով ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի 2.1 խնդրի 5-րդ գործողության իրականացման հանձնառությամբ՝ բակալավրի կրթական ծրագրի մասնագիտական մի շարք դասընթացներում պետք է ներմուծվի հետազոտական աշխատանք: Հետազոտական աշխատանքը ներմուծվում է տվյալ դասընթացի շրջանակում հետազոտության կատարման և ներկայացման միջոցով, որի նպատակն

է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը:

Ամբիոնի վարիչը ներկայացրեց նաև հետազոտական բաղադրիչի նկարագրությունը և գնահատման ձևը: Վ. Ավագյանը հավելեց, քանի որ 5-րդ և 6-րդ կիսամյակներում նախատեսված կուրսային աշխատանքները ուսումնական պլանից դուրս են մղվում, հետևաբար դրանց համապատասխան կրեդիտները պետք է վերաբաշխել: Զեկուցողը նշեց, որ ամբիոնը որոշել է 2019-2023, 2020-2024 ուստարվա ուսումնական պլաններում «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-1» դասընթացի 4 կրեդիտը դարձնել 5, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-2» դասընթացի 5 կրեդիտը դարձնել 6, «19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության պատմություն-1» դասընթացի 6 կրեդիտը դարձնել 7, «Հայոց լեզվի պատմություն» դասընթացի 6 կրեդիտը դարձնել 7՝ առանց ժամային փոփոխությունների, իսկ բակալավրի կրթական ծրագրերի մասնագիտական հետևյալ դասընթացներում ներմուծել հետազոտական աշխատանք ***(Հավելված 1)***:

Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Դ. Թինոյանը ներկայացրեց այն բոլոր փոփոխությունները, որոնք տեղ են գտել «Պատմություն» կրթական ծրագրի 2017-2021, 2018-2020, 2019-2023, 2020-2024 ուսումնական պլաններում: Համաձայն այդ փոփոխությունների՝ կուրսային աշխատանքների համար նախատեսված կրեդիտները, ըստ ուսումնական պլանների և առարկաների, բաշխվել են հետևյալ կերպ.

2017-2021 ուսումնական պլան - հետազոտական բաղադրիչով առարկա՝ Հայոց պատմության պատմագրություն:

2018-2020 ուսումնական պլան - հետազոտական բաղադրիչով առարկաներ՝ Նոր պատմություն-1, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Հայոց պատմության պատմագրություն

5-րդ կիսամյակ՝

1. «ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի հետխորհրդային շրջանի պատմություն» առարկայի 4 կրեդիտը դարձնել 5 կրեդիտ
2. «Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն» առարկայի 4 կրեդիտը դարձնել 5 կրեդիտ

7-րդ կիսամյակ՝

1. «Հայոց պատմության պատմագրություն» առարկայի 4 կրեդիտը դարձնել 5 կրեդիտ
2. «Հայ և համաշխարհային արվեստի պատմություն» առարկայի 3 կրեդիտը դարձնել 4 կրեդիտ

2019-2023 ուսումնական պլան - հետազոտական բաղադրիչով առարկաներ՝ Հայոց պատմություն-4, Ռուսաստանի պատմություն-3, Նոր պատմություն-1, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Հայոց պատմության պատմագրություն

5-րդ կիսամյակ՝

1. «ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի հետխորհրդային շրջանի պատմություն» առարկայի 4 կրեդիտը դարձնել 5 կրեդիտ
2. «Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն» առարկայի 4 կրեդիտը դարձնել 5 կրեդիտ

7-րդ կիսամյակ՝

1. «Հայոց պատմության պատմագրություն» առարկայի 4 կրեդիտը դարձնել 5 կրեդիտ
2. «Հայ և համաշխարհային արվեստի պատմություն» առարկայի 3 կրեդիտը դարձնել 4 կրեդիտ

2020-2024 ուսումնական պլան - հետազոտական բաղադրիչով առարկաներ՝ Հայոց պատմություն-4, Ռուսաստանի պատմություն-3, Նոր պատմություն-1, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Հայոց պատմության պատմագրություն

5-րդ կիսամյակ՝

1. «ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի հետխորհրդային շրջանի պատմություն» առարկայի 4 կրեդիտը դարձնել 5 կրեդիտ
2. «Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն» առարկայի 4 կրեդիտը դարձնել 5 կրեդիտ

7-րդ կիսամյակ՝

1. «Հայոց պատմության պատմագրություն» առարկայի 4 կրեդիտը դարձնել 5 կրեդիտ

2. «Հայ և համաշխարհային արվեստի պատմություն» առարկայի 3 կրեդիտը դարձնել 4 կրեդիտ

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը ներկայացրեց ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգը, որը նախապես ներկայացվել էր դասախոսներին՝ կարգին ծանոթանալու, իրազեկվելու, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնելու համար: Այնուհետև Լ. Հարությունյանը համառոտ ներկայացրեց ընդհանուր դրույթները, այն է՝ ղեկավարվելով ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի 2.1 խնդրի 5-րդ գործողության իրականացման հանձնառությամբ՝ Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական մի շարք դասընթացներում ներմուծվում է հետազոտական աշխատանք:

2. Հետազոտական աշխատանքը ներմուծվում է տվյալ դասընթացի շրջանակում հետազոտության կատարման և ներկայացման միջոցով, որի նպատակն է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը: Հետազոտական աշխատանքը ներմուծվում է դասընթացի տեսական կամ գործնական պարապմունքներին հատկացված ժամերին և ենթադրում է դասավանդող դասախոսի խորհրդատվություն:

3. Հետազոտական աշխատանք ներառող մասնագիտական դասընթացների ցանկը սահմանում է ծրագրի ղեկավարը և հաստատվում է ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից: Հաստատումից հետո այն ներառվում է համապատասխան կրթական ծրագրի մասնագրում: Բակալավրի կրթական ծրագրերում այդ դասընթացների նվազագույն քանակը երկուսն է, իսկ առավելագույնը՝ վեցը:

Այնուհետև կրթական ծրագրի պատասխանատուները՝ հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը և դասախոս Վ. Մելիքսեթյանը, ներկայացրին հետազոտական բաղադրիչ ներդնելու և փորձագիտական եզրակացության արդյունքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ իրենց առաջարկությունները *(Հավելված 2)*:

Օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ք. Հարությունյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա կուրսային աշխատանքներն ինքնուրույն հետազոտական աշխատանքով փոխարինելու և կրթական ծրագրում փոփոխություններ կատարելու մասին: Նա նշեց, որ հետազոտական աշխատանքները պետք է տրվեն այնպիսի առարկաներից, որ ուսանողների համար յուրացվող լինի: Զեկուցողը նաև հավելեց, որ այն կամընտրական առարկաները, որոնք կազմված են երկու տեսական բաղադրիչներից, պետք է դասավանդվեն երկու դասախոսների կողմից: Նա նշեց, որ համապատասխան փոփոխություններ են կատարել, իսկ հետազոտական աշխատանքների համար ընտրվել են հետևյալ առարկաները՝ յուրաքանչյուրը՝ մեկ կրեդիտ.

1. տեսական քերականություն
2. բառագիտություն
3. երկրագիտություն
4. ոճագիտություն

Ռուսաց լեզվի սեկցիայի ղեկավար Ա. Այդինյանը ներկայացրեց, որ հետազոտական աշխատանքների համար ընտրվել են հետևյալ առարկաները՝ յուրաքանչյուրը՝ մեկ կրեդիտ.

1. 19-րդ դարի ռուս գրականության պատմություն-2
2. 19-րդ դարի ռուս գրականության պատմություն-3
3. Ժամանակակից ռուսաց լեզվի ձևաբանություն -2
4. Ժամանակակից ռուսաց լեզվի շարահյուսություն -2
5. Ժամանակակից ռուսաց լեզվի ոճաբանություն
6. Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյան, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., դոցենտ Մ. Զուրաբյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել կրթական ծրագրերում կատարված վերոհիշյալ փոփոխությունները և ներկայացնել Ուսումնամեթոդական վարչություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝	Վ. Աղաբաբյան

Հավելված 1

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՆԵՐԱՌՈՂ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ՝ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ (2017-2021, 2019-2023, 2020-2024):

2017 -2021		
Առարկա	**Կիսամյակ / կրեդիտ**	**Հետազոտ. բաղադրիչ**
Հայոց լեզվի ոճագիտություն	7/4	1
Հայ գրաքննադատության պատմություն	7/5	1

2019 -2023		
Առարկա	**Կիսամյակ / կրեդիտ**	**Հետազոտ. բաղադրիչ**
Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն-2	4/5	1
19-րդ դարի հայ գրականության պատմություն-2	4/7	1
Հայոց լեզվի պատմություն	7/6	1
Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-2	6/6	1
Նորագույն շրջանի հայ գրականության պատմություն-2	7/5	1

2020 -2024		
Առարկա	**Կիսամյակ / կրեդիտ**	**Հետազոտ. բաղադրիչ**
19-րդ դարի հայ գրականության պատմություն-2	4/7	1
Ընդհանուր լեզվաբանություն	4/5	1
Հայոց լեզվի պատմություն	6/7	1
Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-2	6/6	1
Նորագույն շրջանի հայ գրականության պատմություն-2	7/5	1
Արդի հայ գրականության պատմություն	7/6	1

Հավելված 2

031301.01.6 «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ ՆԵՐԴՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Հոգեբանություն» մասնագիտությունում դասավանդող հոգեբան մասնագետների կարծիքը հետազոտական բաղադրիչի ներդրման վերաբերյալ. Հետազոտական բաղադրիչ ներդնել հետևյալ առարկաների ժամաքանակում.

2-րդ կուրսի 2-րդ կիսամյակ՝

- ✓ Դիֆերենցիալ հոգեբանություն և պրակտիկում
- ✓ Փորձարարական հոգեբանություն

3-րդ կուրսի 1-ին կիսամյակ՝

- ✓ Զարգացման հոգեբանություն
- ✓ Հոգեախտորոշում

3-րդ կուրսի 2-րդ կիսամյակ՝

- ✓ Բժշկական հոգեբանություն

4-րդ կուրսի 1-ին կիսամյակ՝

- ✓ Կառավարման հոգեբանություն

Հաշվի առնելով փորձագիտական եզրակացությունները՝ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. *3-րդ կուրսի 2-րդ կիսամյակ (կամընտրական)՝* Արտթերապիա / Խաղային թերապիա

2. *4-րդ կուրսի 1-ին կիսամյակ (կամընտրական)՝* Այցելուակենտրոն թերապիա / Մանկական հոգեախտորոշում և հոգեթերապիա

3. Արտակարգ իրավիճակների հոգեբանություն (3-րդ կուրսի 2-րդ կիսամյակ) և Մաթ. վիճակագրական մեթոդները հոգեբանության մեջ (4-րդ կուրսի 1-ին կիսամյակ) առարկաները տեղերով փոխել:

4. Դիֆերենցիալ հոգեբանություն և պրակտիկում (2-րդ կուրսի 1-ին կիսամյակ) և Անձի տեսություններ (2-րդ կուրսի 2-րդ կիսամյակ) առարկաները տեղերով փոխել:

5. Հոգեախտորոշում (2-րդ կուրսի 2-րդ կիսամյակ) և Փորձարարական

հոգեբանություն (3-րդ կուրսի 1-ին կիսամյակ) առարկաները տեղերով փոխել:

6. Կուրսային աշխատանքներին հատկացված ժամերը համապատասխանաբար հատկացներ 3-րդ կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների (Զարգացման հոգեբանություն, Հոգեախտորոշում, Հոգեբանական խորհրդատվություն և պրակտիկում, Հոգեսոմատիկա) առարկաների վրա (տես՝ ուս. պլան 2020-24):

«Հոգեբանություն» ՄԿԾ պատասխանատու՝ հ.գ.թ., դոցենտ Լ.Կ. Սարգսյան

011301.00.6 «ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ ՆԵՐԴՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019-20 և 2020-2024 ուս. պլաններ.

Հետազոտական բաղադրիչ ներդնել հետևյալ առարկաների վրա.

3-րդ կուրսի 1-րդ կիսամյակ՝

- ✓ Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա-2
- ✓ Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-2

3-րդ կուրսի 2-րդ կիսամյակ՝

- ✓ Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա-3
- ✓ Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-3

3-րդ կուրսի 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքի 1 կրեդիտը հատկացնել «Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա-2» առարկային, մյուս 1 կրեդիտը՝ «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-2» առարկային:

3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի կուրսային աշխատանքի 1 կրեդիտը հատկացնել «Ես և շրջակա աշխարհը» առարկային, մյուս 1 կրեդիտը՝ «Մանկական գրականություն» առարկային: Այս 2 առարկաների համար ստուգման ձևը դարձնել եզրափակիչ գնահատամամբ:

2018-22 ուս պլան.

Հետազոտական բաղադրիչ ներդնել հետևյալ առարկաների վրա.

3-րդ կուրսի 1-րդ կիսամյակ՝

- ✓ Տարրական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման մեթոդիկա-2
- ✓ Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա-2

3-րդ կուրսի 2-րդ կիսամյակ՝

- ✓ Տարրական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման մեթոդիկա-3
- ✓ Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա-3

3-րդ կուրսի 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքի 1 կրեդիտը հատկացնել «Կրտսեր դպրոցականի հոգեկանի զարգացման հիմնախնդիրները» առարկային, մյուս 1 կրեդիտը՝ «Գործնական մանկավարժություն» առարկային:

4-րդ կուրսի 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքի 2 կրեդիտը հատկացվել է «Մանկական գրականություն» առարկային:

ԿԾՊ, դասախոս Վ. Մելիքսեթյան